ցեն նախնթացս, և երկրորդ վրանս սպասաւորօք հանդերձ, զի կազմեսցեն տեղի բնակութեան իւրեանց ըստ իւրաքանչիւր տեղի, վաղիւն ելանելով զօրք բանակի այր և ձիօք և հետևակօք խաղալով 'ի նորում իջևանս իւրաքանչիւր ոք գրեցեն վրանս և տեղիս իւրեանց պատրաստ միևնոյն կերպարանօք որպէս առաջինն։

## ԳԼՈՒԽ ՅԼԳ.

'Ի ժամանակի խաղալոյ բանակի 'ի տեղիս՝ տեղիս հարկաւոր է ամենայն հազարապետ գընդաւ իւրով կարգաւ ընթանասցէ մի՛ խառնեսցի 'ի միոյ գնտէ զօրք առ 'ի գունտս միւսոյ։

## ԳԼՈՒԽ ՅԼԴ.

Ամենայն հազարապետ 'ի ժամանակս թէ իջևանի, և կամ թէ 'ի ընթանալոյ պարտ է լինել գնտաւ իւրով մի խումբ հանդերձ թօփով, վառօդով և ամենայն հարկաւորութեամբ իւրով պատրաստ որպէս առ 'ի դիմամարտել։

## ԳԼՈՒԽ ՅԼԵ.

Երկրաչափն բանակին պարտ է մի աւուր յառաջ քան զխաղալն բանակին առ այլ դաշտ մտցէ 'ի դաշտն և բաժանեսցի երկիր և ջուր վասն իջանելոյ բանակին կարգաւ, փորձեսցի